

Գայանե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան*

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Հոդվածի նպատակն է բացահայտել ու վերլուծել գերմաներենի՝ որպես երկրորդ օտար լեզվի քերականական այնպիսի երևույթներ, որոնք կարելի է իբրև տրանսպոզիցիա (վերադաշնակում) կիրառել գերմաներենի դասավանդման գործընթացում այն ուսանողների համար, որոնք ունեն ռուսերենի կամ անգլերենի՝ որպես առաջին օտար լեզվի լեզվական ունակություններ ու հմտություններ: Հոդվածում հանգամանալից ներկայացված են քերականական փոխներթափանցման ի հայտ գալու մեխանիզմները: Ներկայացված են լեզվական այն մակարդակները, որտեղ դրսևորվում է քերականական փոխներթափանցումը: Հոդվածում դիտարկված են քերականական այն երևույթները, որոնք բովանդակում են գերմաներենի հետ հայերենի, ռուսերենի և անգլերենի համընկնումները:

Բանալի բառեր. *փոխներթափանցում, երկլեզվություն, ձևաբանական փոխներթափանցում, շարահյուսական փոխներթափանցում, տրանսպոզիցիա, թարգմանության ռազմավարություն, լեզվական նյութի ներմուծում*

Գիտատեխնիկական առաջընթացը ու գլոբալացումը որակապես փոխել են հարաբերությունները մարդկանց ու պետությունների միջև: Այդ պայմաններում ընդլայնվում ու ամրապնդվում են կապերը բիզնես գործընկերների, պետական պաշտոնյաների, կառավարության և գործարար ընկերությունների միջև, փորձ է արվում պահպանել միջմշակութային համագործակցությունը, շփումները երկրների միջև, նպաստել այլ մշակույթների ուսումնասիրությանը: Այս բոլոր գործընթացները սերտորեն կապված են հաղորդակցման հիմնական միջոցի՝ լեզվի հետ: Այս գործընթացում առանձնահատուկ դեր ունի երկլեզվությունը: Երկլեզվությունը և լեզուների շփումը բարենպաստ պայմաններ են ստեղծում լեզվական փոխներթափանցման դրսևորման համար:

Ըստ Վ. Վաֆենի, լեզուների դասավանդման մեթոդիկայում փոխներթափանցումը (ինտերֆերենցիա) դիտարկվում է իբրև սովորողի կողմից «նրա նախկին լեզվական փորձի չգիտակցված փոխանցման արդյունք, իբրև մայրենի լեզվի արգելակող ազդեցություն ուսումնասիրվող երկրորդ լեզվի վրա, որը դժվարացնում է օտարալեզու համակարգի հաջող տիրա-

պետումը» /Вафеев, 1988: 101/: Այս տեսակետից ցանկացած օտար լեզվի ուսուցման գործընթաց անխուսափելիորեն բախվում է օտար լեզուն սովորողի կողմից նրա նախկին լեզվական փորձի փոխանցման արդյունքում առաջացած սխալների ու նոր լեզվի լեզվական կառույցները յուրացնելու գործընթացում առաջացած խոչնդոտների հաղթահարման խնդրին: Դրանք առաջանում են լեզվական տարբեր բնագավառներում՝ քերականական, հնչյունաբանական, բառային (իմաստաբանական), ուղղագրական և այլն: Երկրորդ օտար լեզվի ակտիվ քերականական երևույթները ուսուցանելիս անհրաժեշտ է հաշվի առնել առաջին օտար լեզվի և մայրենի լեզվի միջամտության և՛ դրական (տրանսպոզիցիա), և՛ բացասական (ինտերֆերենցիա) ազդեցությունները /Hufeisen, Neuner, 2003: 180/: Այդ նպատակին է ծառայում տարբեր լեզուների համապատասխան երևույթների զուգադրումը, որը սովորաբար կատարվում է երեք մակարդակներում՝ ձևի, բովանդակության և գործառության /Гак, 1979: 58/:

Բովանդակության մակարդակում քերականական երևույթները զուգադրվում են տարբեր լեզուներում նրանց նմանությունների ու տարբերությունների տեսանկյունից: Եթե որոշ քերականական երևույթներ համընկնում են որևէ մակարդակում, ապա կարելի է ակնկալել դրական փոխանցում (տրանսպոզիցիա), ինչը կհեշտացնի նոր խոսքային կարողությունների ու հմտությունների ձևավորումը: Նման երևույթների հատուկ մատուցման ու մշակման անհրաժեշտություն չկա, քանի որ այս քերականական երևույթին ուսանողները բավականաչափ տիրապետում են առաջին օտար լեզվից /Мусланова, 1973: 128/: Չհամընկնող տարրերը կարող են լինել խնդրահարույց լեզվի դասավանդման գործընթացում ու դառնալ փոխներթափանցման (ինտերֆերենցիայի) պատճառ, որը անհրաժեշտ է հաղթահարել հատուկ վարժությունների միջոցով:

Լեզուների միջև առկա համընկնող քերականական երևույթների մեկնաբանումը օգնում է ակնհայտ դարձնել այն երևույթները, որոնք անգլերենի կամ նաև ռուսերենի /իբրև 1-ին օտար լեզու/ քերականությանը տիրապետելու դեպքում հեշտությամբ կյուրացվեն հայ ուսանողների կողմից՝ գերմաներենը սովորելիս: Տրանսպոզիցիայի երևույթը հատկապես մեծ է ազգակից լեզուների ուսումնասիրության ժամանակ: Նրանց կառուցվածքատիպաբանական նմանությունները և ուսուցման գործընթացում դրանց օգտագործումը հեշտացնում են նոր լեզվի յուրացման գործընթացը: Ուսուցանվող օտար լեզուների վրա մայրենիի դրական ազդեցության մասին իրենց աշխատություններում ընդձել են բազմաթիվ լեզվաբաններ, ինչպես Լ.Ս. Վիգոտսկին /Выготский, 1995: 292/, Լ.Վ. Շչերբան /Щерба, 1974: 313-318/ և այլք: Մինչդեռ այն երևույթները, որոնք առկա են և՛ նոր ուսումնասիրվող, և՛ արդեն տիրապետվող լեզուներում, սակայն չեն համընկնում ու ունեն միմյանցից շեղումներ, բավականին խնդրահարույց են ու կարող են սխալների պատճառ դառնալ: Ուստի այդ

քերականական խոչնդոտները հաղթահարելու ու յուրացնելու համար պահանջվում են հատուկ վարժություններ ու մատուցման ձևեր:

Դիտարկումները ցույց են տալիս, որ օտար լեզուների բաժնի ուսանողները, նույնիսկ օտար լեզվի լավ իմացության դեպքում, երբեմն սխալներ են թույլ տալիս, որոնց պատճառը հաճախ լեզվական փոխներթափանցումն է: Դրա դրսևորումներից մեկը՝ քերականական փոխներթափանցումը լեզվաբանության մեջ ամենից հաճախ բանավեճերի թեմա դարձած երևույթներից է: Բազմաթիվ հայտնի լեզվաբաններ, ովքեր զբաղվել են փոխներթափանցման երևույթով, սկզբում կասկածի տակ են դրել այն տեսակետը, թե մի լեզվի քերականական որևէ կառույց կարող է ազդել մեկ այլ լեզվի վրա: Այդ կարծիքն է ժամանակին հայտնել օրինակ է.Սեպիրը. «Մենք ոչ մի տեղ չենք հանդիպում ձևաբանական փոխազդեցության, բացի մակերեսային ձևերից» /Сэпир, 1993: 233/: Սակայն եղել են նաև լրիվ հակառակ կարծիքներ: Գ. Շուխարդտը պնդում էր. «Նույնիսկ այդքան սերտ կապված ձևույթները, ինչպիսիք են հոլովիչները, երաշխավորված չեն օտարալեզու նյութի ազդեցությունից» /Schuchardt, 1928: 195/:

Քերականական փոխներթափանցումը ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մի լեզվի քերականական միավորների կազմությունը, փոփոխություններն (խոնարհում, հոլովում և այլն) ու համաձայնությունները (ենթակա-ստորոգյալ, հատկացուցիչ-հատկացյալ, որոշիչ-որոշյալ և այլն) օտար լեզուն սովորողի կողմից փոխանցվում են նոր յուրացվող լեզվում գոյություն ունեցող նմանատիպ տարրերի վրա: Այսպիսով, փոխներթափանցումը առաջանում է այնտեղ, որտեղ միմյանց են հանդիպում երկու լեզուների անհամապատասխանությունները: Ընդ որում, քերականական փոխներթափանցումը առավել հաճախ է ի հայտ գալիս ոչ ազգակից լեզուների փոխհարաբերության ժամանակ /Багаева, 2010: 127/: Ներկայումս լեզվաբանության մեջ տարբերակվում են քերականական փոխներթափանցման ձևաբանական ու շարահյուսական տեսակները:

Ձևաբանական փոխներթափանցումը վերաբերում է լեզվի ձևույթների ու խոսքի մասերի մակարդակներին: Մայրենի լեզվի բառակազմական տարբեր միջոցներն ու դրանց փոփոխությունների համակարգը կարող են փոխանցվել նոր յուրացվող լեզվի նորմերի վրա: Փոխներթափանցման կարող են ենթարկվել գրեթե բոլոր խոսքի մասերը:

Շարահյուսության հիմնական խնդիրը լեզվի շարահյուսական միավորների և դրանք պայմանավորող քերականական հարաբերությունների քննությունն է: Շարահյուսական միավորներն են՝ նախադասության անդամները, բառակապակցությունները և նախադասությունները: Այս միավորների մակարդակում էլ հենց ի հայտ է գալիս շարահյուսական փոխներթափանցումը: Քանի որ նոր լեզուն սովորողների խոսքը դեռևս կատարյալ չէ, ուստի օտար լեզվով հաղորդակցման ընթացքում մարտնչի լեզուն այս կամ այն չափով «հենարան» օգտագործելն անխուսափելի է,

ուստի անխուսափելի է նաև լեզվական փոխներթափանցումը: Օտար լեզվի դասավանդման գործընթացում փոխներթափանցման հաղթահարման *ուղիներից մեկը* շփվող լեզուների քերականական համընկնող ձևերի տեղին ու հմուտ կիրառումն է: Երբ սովորողները հայ ուսնողներ են, այդ համընկնումները կարելի է դիտարկել ռուսերենի կամ անգլերենի հետ համեմատության մեջ, քանի որ այդ լեզուները նրանց համար կարող են համարվել իբրև 1-ին օտար լեզու:

Այս առումով առանձին դիտարկման են արժանի քերականական այն երևույթները, որոնք համընկնում են գերմաներենում ու անգլերենում՝ իբրև առաջին օտար լեզու, ու մասնակիորեն նաև հայերենում՝ իբրև մայրենի լեզու: Դրանց առկայությանը անշուշտ մեծապես նպաստում է այդ լեզուների ծագումնաբանական ընդհանրությունը: Այս դեպքում արդեն գործ ունենք **տրասպոզիցիայի** հետ: Ըստ խոսքի մասերի դրանց դրսևորումները բավականին ակնհայտ են:

Անձնանունների պարկանելության արտահայտումը այդպիսի օրինակներից մեկն է, որտեղ անգլերենի ու գերմաներենի կառույցները համընկնում են ձևի ու բովանդակային մակարդակներում: Օրինակ՝ Karl's bag (անգլ.), Karls Tasche (գերմ.): Սակայն գործառական մակարդակում նրանք համընկնում են միայն մասնակիորեն: Անգլերենի Karl's bag ձևին համապատասխանում են գերմաներենի երկու հոմանիշային ձևեր՝ Karls Tasche և die Tasche von Karl: Նշենք, որ գերմաներենում նախընտրելի է անգլերենին համընկնող -s մասնիկով կազմված ձևը: Սակայն անգլերենում կան գերմաներենի von նախդիրով կազմվող ձևերին համապատասխանող of նախդիրով կազմված ձևեր՝ the museums of Moscow, գերմ.՝ die Museen von Moskau:

Որոշյալ հոդի օգտագործումը գերմաներենում ու անգլերենում ներքոհիշյալ դեպքերում համընկնում է ինչպես բովանդակային այնպես էլ գործառական մակարդակներում /Բերբերյան, 2010: 442/: Համընկնման այս դեպքերը գերմաներենի դասավանդման գործընթացքում տրանսպոզիցիայի լավագույն օրինակներ են, եթե սովորողը տիրապետում է անգլերենին՝ իբրև 1-ին օտար լեզվի:

– Գոյականներից առաջ, որոնք միակն են իրենց տեսակի մեջ և՛ անգլերենում, և՛ գերմաներենում գործածվում է որոշյալ հոդ (անգլ. the Sun, the Earth, գերմ. Die Sonne, die Erde):

– Աշխարհի չորս կողմերի հետ (անգլ. the north, the south, գերմ. der Norden, der Süden...):

– Աշխարհագրական անունների հետ՝ գետերի, ծովերի, օվկիանոսների, լեռնաշղթաների անունների հետ.(անգլ. the Thames, գերմ. die Elbe, die Alpen...):

Հոդի բացակայության դեպքերի համընկնումները նույնպես քիչ չեն, ու դրանց ճշգրիտ կիրառումը գերմաներենի դասավանդման գործում, անհամեմատ կիեշտացնի հայալեզու սովորողի համար գերմաներենի

յուրացումը: Օրինակ՝ անորոշ հոդի կիրառումը (գերմաներենում ու անգլերենում) և հոդի բացակայությունը (հայերենում), երբ առարկայի մասին խոսվում է առաջին անգամ, ինչպես նաև նրա գործածումը հաջորդող համատեքստում, երբ առարկան արդեն ծանոթ է, լեզուների համեմատությամբ մատուցելը կարելի է համարել լավագույն մեթոդը այս քերականական երևույթը հաջողությամբ ուսուցանելու համար (Սա գիրք է: Գիրքը նոր է: (անգլ.) This is a book. The book is new. (գերմ.) Das ist ein Buch. Das Buch ist neu):

Ինչպես վերը նշվեց՝ քերականական համընկնումներ կարելի է տեսնել գրեթե բոլոր խոսքի մասերի մոտ: Ածականների դեպքում, օրինակ, ամենաշատ համընկնումներ տեսնում ենք ածականի համեմատության աստիճանների կազմման մեջ: Ածանակի բաղդատական աստիճանի կազմելու համար և՛ գերմաներենում, և՛ անգլերենում օգտագործվում է -er վերջածանցը: Իսկ գերադրական աստիճանի համար օգտագործվում է -est վերջածանցը անգլերենում, ու -st գերմաներենում (-est գործածվում է, եթե ածականը վերջանում է -d, -t, -s, -ß, -x, -tz, -z, -st վերջավորություններով) /Բերբերյան, 2010: 235/: Օրինակ՝ անգլ. deep – deeper – deepest, գերմ. heiß – heißer – heißest: Ե՛վ անգլերենում, և՛ գերմաներենում կան անկանոն ածականներ, որոնք իհարկե ոչ բոլորն են հոմանիշներ: Հոմանիշ բառերի առկայության հիշատակումն ու դրանց մատնանշումը կօգնի քերականական այս առանձնահատկության մտապահումն ու յուրացումը: Անշուշտ կան նաև տարբերություններ: Օրինակ՝ գերմաներենում միավանկ բառերը բաղդատական ու գերադրական աստիճաններում ստանում են **ումլաուիթ** /ձայնափոխություն/: Սակայն արդեն առկա նմանությունները քերականական այս երևույթում օգտակար են լեզուն և՛ հեշտությամբ սովորեցնելու, և՛ յուրացնելու համար ու այս գործում կարող են ստանձնել տրանսպոզիցիայի դեր:

Առանձնանում են նաև այնպիսի քերականական երևույթներ, որոնք ունեն համապատասխանություններ ռուսերենում և գերմաներենում: Իհարկե, ռուսերենի քերականության մեջ այնպիսի երևույթները, որոնք կարելի է օգտագործել գերմաներենի ուսուցման գործընթացում, իբրև դրական փոխներթափանցում, զգալիորեն քիչ են: Հենվելով ռուսերենի վրա նույնպես կարելի է մշակել մի շարք մոտեցումներ: Դրանցից է, օրինակ՝ *ածականի վերջավորությունների* միջոցով գոյականի սեռի դրսևորման ձևը և ածականի հոլովումը ռուսերենում ու գերմաներենում (ռուս. новая книга, большое ведро, старый дом, գերմ. neues Buch, schöne Frau, alter Tisch):

Փոխներթափանցման հաղթահարման *ուղիները մեկն էլ* մալրենիի ու առաջին օտար լեզվի հնարավոր բազասական ազդեցության օբյեկտիվ գնահատումն, ու շփվող լեզուների զուգադրման միջոցով մատուցելն է:

Գերմաներենի ու հայերենի համադրման պարագայում ամենահաճախ հանդիպող բազասական ազդեցությունը ի հայտ է գալիս նախադասության մեջ ստորոգյալի դիրքի հետ կապված: Գերմաներենում

ստորոգյալի երկրորդ ամրագրված դիրքը նախադասության մեջ հաճախ է խախտվում հայերենի նախադասության ու բառակապակցությունների ազատ կառուցի ազդեցությամբ: Բայի հետ կապված փոխներթափանցման հաճախ հանդիպող դեպքեր են նաև ստորադասական նախադասությունները: Այս պարագայում հաճախ հայալեզու ուսանողները երկրորդական նախադասության ստորոգյալը օգտագործում են ազատ դիրքով՝ գերմաներենում ամրագրված վերջին դիրքի փոխարեն:

Օրինակ՝ Ինձ ասագին, որ նա **գալու է** երկու օրից:

Man hat mir gesagt, dass er in zwei Tagen **kommt**.

Գերմաներենում ենթակալի ու ստորոգյալի համաձայնության քերականական կատեգորիան յուրազնեյիս սովորողները նույնպես կարող են բախվել գերմաներենի համապատասխան կատեգորիայի վրա մայրենի լեզվի ունեցած բացասական ազդեցությանը: Օրինակ՝ Եթե 2 ենթակաները մեկ միասնություն են կազմում, ապա ստորոգյալը գերմաներենում դրվում է եզակի թվով: Մինչդեռ հայերենում նման դեպքում ստորոգյալը հոգնակի է գործածվում:

Alt und jung **arbeitet** im Feld.

Ահել ու ջահել **աշխատում են** դաշտում:

Ինտերֆերենցի խնդիրը կա նաև մեկից բարձր թվականի հետ գոյականի օգտագործման ժամանակ: Հայերենում այն դրվում է եզակի թվով, իսկ գերմաներենում՝ հոգնակի:

Օրինակ՝ Ես գնում եմ **երեք խնձոր** իմ աղցանի համար:

Ich kaufe **drei Äpfel** für meinen Salat.

Ռուսերենի՝ իբրև 1-ին օտար լեզվի տիրապետման պայմաններում գերմաներեն սովորողների մոտ փոխներթափանցման պատճառով ամենահաճախ հանդիպող սխալը ռուսերեն գոյականների սեռերի նույնականացումն է գերմաներենի հետ: Սա վերաբերում է հատկապես անշունչ առարկաներին, որոնց դեպքում կենսաբանական սեռը ոչնչով չի կարող օգնել: Օրինակ՝ եթե սովորողը գիտի ռուսերենում գրենական պիտույքների սեռերը (ռուս. книга, тетрадь, ручка-իզական սեռ), ապա կարող է մեխանիկորեն սխալմամբ դրանք վերագրել գերմաներեն համապատասխան գոյականներին (das Buch-չեզոք սեռ, das Heft-չեզոք սեռ, der Kugelschreiber- արական սեռ), ինչը հանգեցնում է քերականական սխալի: Այդ պատճառով անհրաժեշտ է գերմաներեն գոյականները սկզբից ի վեր ուսուցանել իրենց հատկանշական որոշիչ հոդերով ու գիտելիքների որոշակի մակարդակից սկսած ներկայացնել նաև սեռերի տարբերակմանը նպաստող կանոններ:

Փոխներթափանցման համար մեծ ասպարեզ է հադիսանում նաև թարգմանությունը, որը լեզվի ուսուցման ու յուրացման գործընթացի անբաժանելի մասն է: Համարժեքության ու համապատասխանության հասնելու նպատակով թարգմանիչը յուրաքանչյուր դեպքում հենվում է

որոշակի գործիքակազմի վրա և փորձում է հավատարիմ մնալ թարգմանվող տեքստի ժանրին ու բնագրի լեզվի նորմերին:

Հ. Քրինգսը թարգմանության ռազմավարությունները սահմանում է որպես թարգմանչի «պոտենցիալ գիտակցված ծրագրեր, որոնք ուղղված են կոնկրետ թարգմանության խնդրի լուծմանը՝ որոշակի թարգմանական գործի սահմաններում» /Klings, 1986: 18/: Միննոյն ժամանակ, Քրինգսը առանձնացնում է մակրոռազմավարություններ՝ թարգմանության խնդիրների լայն շրջանակի լուծման ընդհանուր մեթոդներ, և միկրոռազմավարություններ՝ կոնկրետ խնդրի լուծման հատուկ մեթոդներ: Մակրոռազմավարության շրջանակներում Վ. Ն. Կոմիսարովը դիտարկում է թարգմանության երեք փուլեր. բնօրինակի նախաթարգմանական վերլուծություն, տեքստի բուն թարգմանությունն ու հետթարգմանական վերլուծությունը, այսինքն՝ տեքստի վերամշակումը և ստուգումը: Նշվում է, որ շատ դեպքերում թարգմանիչը անտեսում է առաջին և երրորդ փուլերը /Комиссаров, 2000: 92/:

Շատ հաճախ թարգմանվող տեքստերում հանդիպում են թարգմանական միավորներ, որոնց ճշգրիտ թարգմանված ձևին հասնելու համար անհրաժեշտ է շրջանցել քերականական փոխներթափանցման թակարդները: Այդ միավորները կարող են լինել բառեր, արտահայտություններ կամ էլ քերականական կառույցներ, որոնք գերմաներենից հայերեն ու հակառակը որպես բոլորովին այլ կառույցներ են թարգմանվում: Օրինակ՝ (գերմ.) «Zurückbleiben, bitte!» արտահայտությունը, որը հնչում է տրանսպորտային միջոցում, հայերենում թարգմանվում է որպես նախադասություն. «Ձգուշացե՛ք, դռները փակվում են»:

Արտահայտության ու նախադասության անհամապատասխանություններ ու փոխներթափանցման աղբյուր են նաև ասոյթները, ասացվածքներն ու կոչերը: Օրինակ՝ (գերմ.) Hals und Beinbruch!- Հաջողություն: (գերմ.) Ohne Fleiß, kein Preis! - Ով աշխատի, նա կուտի: Գերմաներենից հայերեն թարգմանության գործընթացին հաճախ հատկանշական է կրավորական (Passiv) կառույցի փոխարինումը ներգործական (Aktiv) կամ չեզոք սեռի կառույցով: Այսպես օրինակ. Er wurde von einem Wagen angefahren. Նրան **հարվածեց** մեքենան: Կամ, նա վրաերթի **ենթարկվեց**: Շարահյուսական փոխարինումները (ինչպես օրինակ պարզ նախադասությունները բարդով) նույնպես քիչ չեն գերմաներենից հայերեն թարգմանելիս (Ich sah ihn kommen. Ես տեսա, թե ինչպես էր նա գալիս):

Փոխներթափանցման վերը նշված դեպքերից խուսափելու համար անհրաժեշտ է դրանք ուսուցանել *համարեքսպերի միջոցով, կամ հենց սկզբից ներկայացնել արտահայտության համապատասխան թարգմանությունը*: Նույնպիսի անհամապատասխանություն հաճախ հանդիպում ենք նաև «kein - ոչ մի» ժխտական մասնիկի գործածման դեպքում: Գերմաներենում kein մասնիկով ժխտվում են գոյականները: Մինչդեռ հայերեն թարգմանությունը ճիշտ է, երբ կազմվում է որպես բայի ժխտում:

Ich habe *kein* Buch. (գերմ.) - Ես գիրք **չունեմ**:

Այսպիսով, մեկ լեզվի՝ մյուսի վրա ազդեցության սկզբունքները հատկապես կարևոր են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր թարգմանիչների համար, քանի որ մի լեզվից մյուսը թարգմանություն կատարելը պահանջում է էլ առավել հմտություններ, քան պարզապես տարբեր լեզուներով հաղորդակցվելը:

Օտար լեզվի ուսուցման ընթացքում լեզվական նյութի վրա աշխատանքը անհրաժեշտ է այնպես կազմակերպել, որ սովորողը քայլ առ քայլ հաղթահարելով նյութի հետ կապված տարբեր բնույթի դժվարությունները, կարողանա այն օգտագործել խոսքային գործունեության տարբեր տեսակներում: Քանի որ լեզուն ինֆորմացիա հաղորդելու և ընդունելու միջոց է, ուստի ուսուցման յուրաքանչյուր աստիճան և օղակ պետք է ուղղված լինի լեզուն կիրառելու ունակության ձևավորմանը:

Օտար լեզվի՝ իբրև լեզվական նյութի հետ աշխատանքի գլխավոր խնդիրն է դրա ներմուծումը՝ բացատրությունը, յուրացված լինելու մակարդակի ստուգումը և սովորողի մոտ մատուցված նյութի կիրառման նախնական ունակությունների ձևավորումը: Իսկ ինչպես հայտնի է լեզվաբանության մեջ ներմուծման կարևորագույն օղակներն են բացահայտումը, ձևը և օգտագործումը /Фоломкина, Лившиц, 1975: 73/:

Նշանակության բացահայտման եղանակները երկուսն են՝ լեզվական ու արտալեզվական, որոնք իրենց հերթին ունեն ենթաեղանակներ:

Ձև ասելով նկատի է առնվում տվյալ լեզվական միավորի արտասանությունը, գրությունը, կառուցվածքը և քերականական ձևը: Իսկ *օգտագործման* առանձնահատկությունները ներկայացնելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել մայրենի ու օտար լեզուներում դրանց իմաստային ծավալների համապատասխանությունն ու անհամապատասխանությունը, որոնց հիման վրա էլ սովորողին ցույց տալ դրանց օգտագործման ոլորտները: *Օգտագործման* առանձնահատկությունները մայրենիում /երբեմն նաև առաջին օտար լեզվում/ ու նոր ուսուցանվող օտար լեզվում և դրանց անհամապատասխանությունը ինտերֆերենցիայի հիմնական պատճառներից մեկն է: Իսկ ինտերֆերենցիայի պատճառով առաջացող դժվարությունները պետք է հաղթահարվեն մեթոդական տեսակավորման հիման վրա կառուցված վարժությունների միջոցով: *Օգտագործման* առանձնահատկություններից է նաև տվյալ լեզվական միավորի այլ միավորների հետ կապակցելու օրինաչափությունները, որոնք չպետք է վրիպեն դասավանդողի ուշադրությունից:

Օտար լեզվի դասավանդման գործընթացը սկսվում է դասավանդողի կողմից լեզվական նյութի մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Այդ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նրան ճիշտ ընտրելու ուսուցման եղանակները՝ անշուշտ հաշվի առնելով թիրախային խմբի լեզվական նախկին փորձն ու հմտությունները: Հաջորդ քայլը լեզվական նյութի /մեր դեպքում քերականական նյութի/ նշանակության բացահայ-

տումն է, որը իրագործվում է լեզվական /թարգմանական ու ոչ թարգմանական/ ու արտալեզվական /գործողության կամ առարկաների ցուցադրում, միմիկա/ եղանակներով: Հաջորդ քայլով դասավանդողը պետք է տարբեր եղանակներով ստուգի, թե որքանով է նոր նյութը յուրացվել սովորողների կողմից: Այս աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել նոր քերականական նյութի հետ մայրենի կամ առաջին օտար լեզվում հավանական առկա համընկնումներին:

Քերականական ձևերի ճշգրիտ ուսուցումը կայուն հիմք է հաղորդակցական ունակության ձևավորման համար:

Լեզվական փոխներթափանցումը (ինտերֆերենցիա) ամենահետաքրքիր երևույթներից մեկն է, որը ի հայտ է գալիս տարբեր լեզուների փոխադարձ շփումների արդյունքում: Փոխներթափանցման հաղթահարումը օտար լեզվի յուրացման գործընթացում գլխավոր նպատակներից մեկն է, այդ պատճառով դրա ուսումնասիրությունն ու գործնական վերլուծությունը շատ կարևոր են: Փոխներթափանցման ուսումնասիրությունները չեն կորցնում իրենց արդիականությունը միջազգային շփումների աճող ինտենսիվության պատճառով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բերբերյան Ն., Եղիազարյան Է. Գերմաներեն, բուհական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2010:
2. Багана Ж., Хапилина Е. В. Контактная лингвистика: Взаимодействие языков и билингвизм. М.: Флинта, Наука, 2010.
3. Белякова Г.А. Восприятие назализации в условиях разных фонологических систем: Автореф. дисс. ... канд. филол. наук. Л., 1981.
4. Вафеев Р.А. Выражение причинно-следственных отношений в русском и татарском языках, учеб. пособие. Югорск: ЮГУ, 1988.
5. Выготский Л.С. Проблемы дефектологии. М.: Просвещение, 1995.
6. Гак В.Г. Межъязыковое сопоставление и преподавание иностранного языка // *Иностранные языки в школе*, 1979, № 3.
7. Комиссаров В.Н. Общая теория перевода. М.: ЧеРо, совместно с «Юрайт», 2000.
8. Мусланова Л. Г. К экспериментальному исследованию взаимодействия фонем трех языков при обучении говорению на втором иностранном языке // *Научные труды по методике преподавания иностранных языков*, № 80. М., 1973.
9. Сэпир Э. Язык // *Сэпир Э. Избранные труды по языкознанию и культурологии*. М., 1993.

10. Фоломкина С.К., Лившиц О.Я. Ознакомление учащихся с новым языковым материалом при обучении устной речи. Обучение устной речи и чтению. М., 1975.
11. Щерба Л.В. Языковая система и речевая деятельность. Л., 1974.
12. Drosdowski G., Müller W. ua. Duden Rechtschreibung der deutschen Sprache, Band 1, Manheim; Leipzig; Wien; Zürich: Dudenverlag, 1996.
13. Hufeisen B., Neuner G.. Mehrsprachigkeitskonzept. Tertiärsprachenlernen. Deutsch nach Englisch. Strasbourg: Council of Europe Publishing, 2003.
14. Krings H.P. Was in den Köpfen von Übersetzern vorgeht. Eine empirische Untersuchung zur Struktur des Übersetzungsprozesses an fortgeschrittenen Französischlernern. Tübingen: Narr, 1986.
15. Schuchardt H. Hugo Schuchardt-Brevier/ ed. L. Spitzer. Halle, 1928

Г. ОГАННЕСЯН – Пути преодоления грамматической интерференции в процессе преподавания немецкого языка. – Цель настоящей статьи – выявить и проанализировать такие грамматические явления немецкого языка, которые могут быть использованы в процессе обучения немецкого как второго иностранного студентов, у которых есть языковые навыки русского или английского как первого иностранного языка. В статье подробно рассмотрены механизмы возникновения грамматической интерференции. Изучены и представлены те лингвистические уровни, в которых она проявляется ярче всего.

Ключевые слова: интерференция, двуязычие, морфологическая интерференция, синтаксическая интерференция, транспозиция, стратегия перевода, введение учебного материала

G. HOVHANNISYAN – Ways of Overcoming Grammatical Interference in the Process of Teaching German. – The aim of the present paper is to analyze and reveal some grammatical phenomena in the German language which can cause cross-linguistic transfer during foreign language acquisition, namely German, taught to the students who already have linguistic experience in English or Russian. The paper covers the mechanisms that bring about grammatical interference in detail, thus considering language transfer (both positive and negative) to support the acquisition of the German language.

Key words: interference, bilingualism, morphological interference, syntactic interference, transposition, translation strategy, introduction of training material